



# Մեծ Սալայում նշվեց Սուրբ Աստվածածնի և գյուղի հոբելյանի տոնը

*235 տարի առաջ տեղի ունեցավ Ղրիմից հայերի գաղթը և Դոնի երկրամասում հաստատվելը: Հիմնադրվեցին Նոր Նախիջևան քաղաքը, Չալթր, Թոփթի, Մեծ Սալա, Սուլթան Սալա, Նեսվետայ գյուղերը: Նոր տեղում հայերը բնակարաններ ու եկեղեցիներ կառուցեցին, անմշակ տափաստանը վարելահող ու այգեստան դարձրին և բարձր բերք ստացան, կրթության ու մշակույթի օջախներ բացեցին, համառ աշխատանքով հասան այսօրվա բարեկեցիկ կյանքին:*

*Չեռք բերված հաջողությունները հնարավոր են դարձել հայերի աշխատասիրության և այն բանի շնորհիվ, որ նրանց համար Ռուսաստանի բարեբեր հողում ստեղծվել են եղբայր ռուս ժողովրդի հետ միասին ձեռք-ձեռքի տված աշխատելու, ստեղծագործելու և բարգավաճելու բոլոր պայմանները:*

Օգոստոսի 31-ի կիրակի օրը բազմաթիվ հյուրեր էին ժամանել Մեծ Սալա: Նրանք եկել էին հարյուրավոր մեծսալացիների, Չալթրից, Թոփթիից, Նեսվետայից, Սուլթան Սալայից, Լենինավանից, Կարմիր Ղրիմից, Լենինականից, Մյասնիկյանի շրջանի մյուս գյուղերից, Դոնի Ռոստովից, Մոսկվայից, Հայաստանից եկած մարդկանց հետ միասին նշելու գյուղի հիմնադրման 235-ամյակը և Սուրբ Աստվածածնի տոնը:

Հանդիսությանը մասնակցում էին տարբեր կազմակերպությունների ղեկավարներ, հոգևոր դասի ներկայացուցիչներ, բարերարներ:

Ներկա էին Դոնի Ռոստովում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս Արարատ Գոմցյանը, "Կոլոս" կոլտնտեսության վարչության նախագահ Գրիգոր Լուսպիկայանը, Մեծ Սալայի գյուղապետ Գուրգեն Պոպովյանը, Հայ Առաքելական եկեղեցու Արմավիրի թեմի առաջնորդ Միօն եպիսկոպոս Ադամյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդի ներկայացուցիչ հայր Կիրակոսը, Չալթրի Սուրբ Համբարձում եկեղեցու քահանա Տեր Թադեոս Հայբարյանը, Ռոստովի Սուրբ Խաչ եկեղեցու քահանա Պողոս Տերտերյանը և այլ հոգևորականներ, Սուրբ Աստվածածին եկեղեցու հայրենանվեր գործերին տարիներ շարունակ աջակցող և դրամական օգնություն ցուցաբերող, 2014 թվականի խաչքավոր Գրիգոր Նոր-Արևյանը:

Սուրբ Աստվածածին եկեղեցում քահանա Տեր Անանիա Բաբայանի և մյուս հոգևորականների կողմից մատուցվեց տոնական պատարագ: Մասնակցություն ունեցան նաև Սուրբ Աստվածածին և Սուրբ Համբարձում եկեղեցիների երգչախմբերը, այդ թվում երգիչներ Սարգիս Հակոբյանը, Գևորգյան ու Վազգենյան ճեմարանների ուսանողներ Միրոն Հայբարյանը և Միհրան Բաղդասարյանը:

Կատարվեց տոնի առթիվ եկեղեցի բերված խաղողի ողկույզների օրհնությունը և բաժանումը ժողովրդին: Իսկ երբ բակում կոլտնտեսության կողմից արված մատաղ ցլիկի համով միսը եփվեց, բազմաթիվ մարդիկ մոտեցան դրված սեղաններին և ճաշակեցին Աստծու այդ բարիքը:

Տոնակատարությունը Մեծ Սալայում անցավ հաջողությամբ, հոգևորականների, գյուղի ղեկավարության և ժողովրդի համագործակցությամբ: Եվ դա փաստացի վկայությունն է մարդկանց հոգևոր կարոտնքի ու հասարակության միասնության: Շատ ուրախալի է, որ միջոցառմանը մասնակցեցին տարբեր տարիքի մարդիկ, բազմաթիվ երեխաներ: Դա է հենց սերնդից սերունդ ժողովրդի լավագույն ավանդույթները փոխանցելու և հարատևելու երաշխիքը:

Հովհաննես ՍԱՐԳՍՅԱՆ

*Նկարներում՝ պահեր տոնակատարությունից տաճարի ներսում:*

Լուսանկարները՝
Արտաշես ՄԻՐՈՒՔՅԱՆԻ





